Հավելված N 1
ՀՀ կառավարության 2026 թվականի
հուլիսի 23-ի N 1090 - Ն որոշման

ՊԵՏԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԻ ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ԱՆՑՄԱՆ ԿԵՏԵՐՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԻՑ ԲԵՌՆԱՏԱՐ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ՝ ԱՌԱՆՑ ԿՈՒՏԱԿԱՅԻՆ ԿԱՅԱՆԱՏԵՂԻ ՄՈՒՏՔ ԳՈՐԾԵԼՈՒ ՄԵԿՆՄԱՆ ԴԵՊՔԵՐԸ ԵՎ ԱՌԱՆՁԻՆ ԲԵՌՆԱՏԱՐ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ՝ ԿՈՒՏԱԿԱՅԻՆ ԿԱՅԱՆԱՏԵՂԻՆԵՐԻՑ ԲԱՑԹՈՂՆՄԱՆ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Սույն հավելվածով սահմանվում են պետական սահմանի ավտոմոբիլային անցման կետերով Հայաստանի Հանրապետությունից բեռնատար տրանսպորտային միջոցների՝ առանց կուտակային կայանատեղի մուտք գործելու մեկնման դեպքերը, ինչպես նաև առանձին բեռնատար տրանսպորտային միջոցների՝ կուտակային կայանատեղիներից բացթողնման առաջնահերթությունները:

2. Բեռնատար տրանսպորտային միջոցները՝ առանց կուտակային կայանատեղի մուտք գործելու պետական սահմանի ավտոմոբիլային անցման կետերով Հայաստանի Հանրապետությունից կարող են մեկնել հետևյալ դեպքերում՝

1) տարերային աղետների, բնական և տեխնածին բնույթի արտակարգ իրավիճակների հետևանքների վերացման համար անհրաժեշտ ապրանքների, խաղաղության պահպանմանն ուղղված գործողությունների իրականացման կամ վարժանքների անցկացման համար անհրաժեշտ ռազմական նշանակության արտադրանքի, ռադիոակտիվ նյութերի, պայթուցիկ նյութերի, մարդասիրական և տեխնիկական օգնության համար նախատեսված ապրանքների, կենդանի կենդանիների, ինչպես նաև դիվանագիտական ներկայացուցչությանը, հյուպատոսական հիմնարկին կամ միջազգային կազմակերպությանն ուղարկվող և (կամ) պատկանող ապրանքների փոխադրման դեպքերում.

2) Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2022 թվականի հուլիսի 15-ի N 118 որոշմամբ սահմանված ապրանքների փոխադրման դեպքերում.

3) մեծ եզրաչափերով տրանսպորտային միջոցներով ապրանքների փոխադրման դեպքում:

3. Կուտակային կայանատեղիներից բեռնատար տրանսպորտային միջոցների բացթողնման համար հիմք են ընդունվում հետևյալ առաջնահերթությունները՝ հետևյալ հաջորդականությամբ՝

1) Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2022 թվականի հոկտեմբերի 17-ի N 160 որոշմամբ սահմանված ապրանքներ (արագ փչացող ապրանքներ) փոխադրող բեռնատար տրանսպորտային միջոցների համար.

2) «Հատուկ» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքներ փոխադրող տրանսպորտային միջոցների համար.

3) լիազորված տնտեսական օպերատորների, օրինապահ հարկ վճարողների, օրինապահության հավաստագիր ունեցող անձանց տրանսպորտային միջոցների համար:

4. Կուտակային կայանատեղիներից բեռնատար տրանսպորտային միջոցների բացթողնման առաջնահերթություն ունեն այն տրանսպորտային միջոցները, որոնք ընդգրկված են տրանսպորտային միջոցների խմբի կազմում, եթե այդ խմբի կազմում ընդգրկված բոլոր տրանսպորտային միջոցները մուտք են գործել կայանատեղի և այդ տրանսպորտային միջոցներից որևէ մեկը հերթերի կառավարման համակարգի միջոցով կանչվել է պետական սահմանի ավտոմոբիլային անցման կետ:

5. Սույն հավելվածի 4-րդ կետի իմաստով տրանսպորտային միջոցը հանդիսանում է տրանսպորտային միջոցների խմբի մաս, եթե այդպիսի տրանսպորտային միջոցները փոխադրվում են մեկ առևտրային (տրանսպորտային) փաստաթղթային փաթեթի շրջանակներում և դրանց վերաբերյալ տվյալները հայտարարագրված են այնպիսի մաքսային հայտարարագրում, որում առկա են նաև այլ բեռնատար տրանսպորտային միջոցների վերաբերյալ տվյալներ:

6. Սույն հավելվածի 3-րդ կետով նշված առաջնահերթությունների կիրառման չափանիշները սահմանվում են ըստ տոկոսային կշիռների, և հերթերի կառավարման համակարգում սահմանվում են Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կողմից՝ ելնելով բեռնատար տրանսպորտային միջոցների հոսքերի ինտենսիվությունից, սեզոնայնությունից կամ օպերատիվ իրավիճակից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ

24.07.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ